Ավետիք Իսահակյան

Շարա՞ն-շարա՞ն ամպերն եկան.

Շարա՞ն-շարա՞ն ամպերն եկան.
Ա՞խ, մուժն առավ իմ չամփեն.
Ո՞ւրտից կուգամ, ո՞ւրտեղ կերթամ,
Միտքըս՝ շըվար, ու չիտեմ:

Էս ինչ կըսկիծ սիրտըս ծեծկեց,
Քուրի՛կ, քեզնեն հեռու կերթամ:
Վարդի փուշը սիրտըս ծակեց,
Դարդը սըրտիս խոլոր կերթամ:

Սար ու ձորեր ձունն է իջեր,
Քամին պա՛ղ-պա՛ղ կըփըչե.
Ես մենակ եմ, ես՝ անընկեր,
Քամին ճակտիս կըփըչե;
Շարա՞ն-շարա՞ն ամպերն եկան.
Ա՞խ, մուժն առավ իմ ճամփեն.
Ո՞ւրտից կուգամ, ո՞ւրտեղ կերթամ,
Միտքըս՝ շըվար, ու չիտեմ;

1897
Ալեքսանդրապոլ